

ՔՆԱՐ ԱՔՍՈՐԱԿԱՆ ՔԵՐԹՈՂԻ



«ՏՈՒՆԵՐՈՒ ԵՐԳԸ», ՇԵՂԻՆԱԿ Մ. ԻՇԽԱՆ



Կան բանաստեղծներ որ դուրս են իրենց ժամանակէն: Զերծ՝ դիրենք չընկալատող կեանքին, անոր մէջ հնչող մեծ կամ փոքր ձայններուն, զայն ալեկոծող փոթորիկներուն հարկադրիչ անդրադարձումէն, առանց, սակայն, այլամերժ եսականութենէ մը նուաճուած ըլլալու:

Անոնք ունենդիրն են աւետարներ ձայներու՝ իրենց միայն լսելի: Անոնք միտքը, հոգին նաեւ, թօթափած է ճշումը արտաքին ամէն առնչութեան, յանուն ամբողջական, բացարձակ ազատութեան մը, ուր ստեղծումին երկունքը կը պայմանաւորուի միայն ներքին վիճակներու բարեխառնութեամբ:

Անոնք ճակատագիրը եղած է միշտ դժխեմ: Որքան որ քիչ է արուեստագէտին տուրքը՝ ժամանակակից իր կեանքին, ա՛յնքան բուռն ու անողոք է վրէժխնդրութիւնն այդ վերջինին: Ապացոյցներ չեն պակսիր: Ինտրային ոսկորները վկայ:

Բայց անոնց արժանիքն ա՛յն պիտի ըլլար մասնաւոր՝ որ իրենց անձը հանդիսանար բեղմնաւոր՝ մեծ երկ մը սնուցանելու չափ. խորունկ ու ընդարձակ՝ լայն շարժումներ թոյլատրելու աստիճան. ճաճանշաւոր՝ ա՛յնքան որ կարենար գալիք օրերու անշփեկի տարածութեան մը վրայ բանալ լուսարձակն իր մտածումին ու զգայութեան, պայծառացնելու, մաս մը դռնէ, մարդկային էութեան դեռ շիտզոֆրենիան խորութիւններէն:

Մարդարէներն են անոնք, լինելութեան պաշտնիքին մեծ փոքրուն մէջ թափառած

մարդկութեան՝ անձանոթ ափունքներու աղօտափայլ մխիթարանքն աւետող: Իրենց բարբառը, կոյս ակունքներէ իր ծագումն առն կը թուի պահ մը օտար ու անսիրելի, ձայնը՝ նորօրինակ իր շեշտով ու աստկութեամբ՝ կը ցուցնէ, կը վիրաւորէ՝ սովորականին վարժութեամբն երջանիկ ականջները, կամ կը թողու զանոնք եղկելիօրէն անտարբեր:

Ճանաչումը այն ատեն կրնայ ուշանալ, բայց ան երբեք պիտի չկրնայ զլացուիլ իրենց յախտնեանպէս: Որովհետեւ, տեւողութեան քառուղիներուն վրայ, ճակատագրականօրէն պիտի յայտնուին չրջաններ որ ճանչնան իրենք՝ դիրենք՝ նախընթաց հոգիի մը կամ հոգիներու կեանքին հոծութեան ու փեղկեղականութեան մէջ: Պիտի զան ժամանակներ, որոնք ուրացուած, թերեւս հեռաւոր, բայց յաւիտ կենդանի հոգիի մը տրոփելնին մէջ պիտի ստուգեն կըշտոյթին իրենց բարբառումին: Այն ատեն, մոռցուածը, դարձեալ խոնարհ՝ բոլոր մեծ հոգիներուն պէս, պիտի բարձրանայ իր պատուանդանին, մեծ պայծառ, իր յաւերժութեան մէջ ա՛լ նուիրադրո՞ւած:

Կան եւ ուրիշներ, նուազ անկախ, նուազ յանդուգն նեւեւ՝ այլուրութեան արկածալից արշաւին մէջ, բայց աւելի թրթռուն ու հաւասարապէս սիրելի: Անոնք, իրենց ժամանակին մէջ, նման են լայնարաց ու զգայալուր ընկալուչներու, ուր կ'իյնայ արժագանդը իրենց շուրջ կամ վերեւ թառալող տարտամ կամ յըստակ բոլոր ձայներուն: Եւ եթէ պատահի որ այդ ձայները ունենան նոյնութեան երանգներ,

համակիր նկարագրի մը թրթռումի ու ստուկութեան՝ բանաստեղծին ներքին, հարազատ ձայներուն հետ, կը կազմեն այն ատեն դաշնակութիւն մը դորեղ ու դիմացկուն որ կը սուղի ունենդիր հոգիներուն խորը՝ անմերժելի քաղցրութեամբ:

Անոնց յաջողութիւնը կ'ըլլայ առաջին թափով եւ անմիջական, բայց այդ պատճառով՝ ո'չ նուազ տեսական միշտ: Զմոռնալ, սակայն, թէ այս հաստատումները նկատի ունին միայն անոնք որ վաւերական արժանիքներու ստուկութիւնը կը բերեն իրենց հետ, ու կ'անցնին արուեստի պարունակէն ներս՝ կանչուածներու իրաւունքով: Կարեւոր՝ այդ կէտը, արդիւնքը համար շարիքը մոյրաճեցին: Վասնզի բազմութիւն են անպարարները, մաքսանկէտներն ու քաղաքատները, ինչպէս ուրիշ՝ նաեւ ա'դ պարունակին մէջն ու շուրջը:

Կ'ըլլայ անոնց ճանաչումը անմիջական, որովհետեւ կը բնակի անոնց մէջ բան մը, նորի՛ն ուրիշ, հասարակին տիրապումէն վեր, անհունորէն դեղեցկացած ու սրտառուչ, որ սակայն չէ՛ օտար: Իրենց նախնականութեան մէջ՝ ողորմ, կիսաւարտ, միլամամային ու անբարբառ տրամագրութիւններ, մտածումներ, լուծումներ ու տեսիլքներ յանկարծ կը գտնեն իճիտ ու սեւեռուն իրենց արտայայտութիւնը: Ճնշուած ձայներու լուսութիւնն է կարծես, ներհուն բայց յորդաղեղ ինձակներու ոգին՝ որ կ'արթննայ յանկարծ, ձեւ կը ստանայ ու կը շարժի, կ'ըսէ ինքզինք, եւ իրեն հետ՝ հոգին բազմութիւններու, մեծ կամ փոքր, ինչ փոքր:

Բանաստեղծներու վերջին այդ դասակարգէն է Մ. Իշխան: Միայն՝ համեմատութիւններու շատ հասկնալի վերապառնումով մը:

Թող այս մտածումները շատ չտեսնուին իր անունին առնչութեամբ: Ամենէն համբալին իսկ ընթերցողներուն՝ պիտի շուտով համոզուի թէ կը բազակայի այս տողերուն մէջ՝ իրար կերպանցելու ճիշդով մը կրկէս ելած վերադարձներու արշաւանքը անհարկի: Ոնոնք հարար կը դիմենք այդ իրաւունքը անոնց որ մենաշնորհուն ունին հասութեան արդէ շահարկումին:

Այս տողերը կ'ուզեն ըսել, ու կ'ըսեն, չե՛ստակ, ստանց բառերը ծամու. անհրաժեշտ

տութիւնն զգալու, թէ «ճունելու երգը» մականաւոր հատորին հեղինակը բանաստեղծ մըն է: Թէ՛ այդ երգերը, անոնց արժանաւոր՝ յոյնները մանաւանդ, երգերն են սերունդը՝ որ իր հայրենիքէն կը յիշէ ա'նքան բան, որքան մարդը՝ մահալութեան իր օրորոցէն, բայց որ կը պտըտցնէ անոր չարչարապին երազը՝ կեանքի ա'նքան բերտ ու անհրապոյր հետապնդումներու ճամբուն վրայ, իր մերժուած դոյութեան հետ: Թէ՛ անոյ՜ այդ տղան, որ դիտէ բարբառը աստուածներուն, կը խօսի լեզուով մը որ իր ակունքներն ունի մահկանացու հոգիներէն ներս, բայց որ օծուն է քաղցրութեամբն սպրիլեան արեւին, ու թրթռուն՝ մեղեդիով:

Սակայն, չենթադրուի երբեք թէ տառնետը՛ երգը միայն կ'արձանագրէ միտերուն ու չիղերուն մէջ այն տղոց, որոնց էութենէն ներս անխորաչափելի պարապութիւններ է պնդած ահաւորադոյնը մարդկային ողբերգութեանց: Մեծ փրկութեամբ, ուրիշ անցան անոնք ու կ'անցնին տակաւին, հնչեցուց անուրախ իր նուազը՝ լարերու վրայ, որոնց թրթռումին մէջ՝ փղշտացի մեր ժամանակը շատ անգամ չգուշակե'ց այրող ցաւը՝ իրեն անմահօթ մորմուքումին: Զգուշակե'ց, որովհետեւ պակսեցաւ իրեն՝ պահանջուած ներութիւնն զգալարանքի: Եւ, ինչո՛ւ չխոստովանիլ, գուցէ նաեւ անոր համար որ այդ փրկութեամբ չունեցաւ տակաւին իր մեծութեան հաւասար երգ մը: Եկաւ ան փչանքներով, եկաւ կաթիլ կաթիլ, երբեմն բարեխառն ու զաղլ, այլ մանաւանդ՝ գիտակցօրէն ճնշուած եւ անողորձքին զուլայ: Բայց, սա վերջին տասնամեակին, ինչ որ եկաւ նորերէն իրեն արժէք՝ արտարական մեր զրականութեան, չե՛զու երբեք դերծ՝ մեծ հրդեհին խարաններէն: Կարելի չէ, զգայարաններու առողջութիւնը ստանց կասկածի տակ դնելու, ուրանալ կծու արտաշնչումը խանձին որ կու գայ այդ զրականութեան ճարտարապետումին մէջ մտնող բառերէն, իրեն յայտարար դէռ միացող չորդեհներու:

Հարկ է դիտանլ, նոյն ատեն, թէ հրդեհը, փրկութեան ու անստուգութիւնը չեն միակ իրականութիւնը մեր ժամանակներուն, ուր, նախ

ուսման օրէնքներուն համաձայն, երկուստապիւթիւնը կը բանայ ծաղկին իր կեանքին: Եւրանդները, բոլորն ու ձեւը այդ ծաղիկին՝ պիտի չկարենային մերժել ներգործութիւնը անոր բաժին հողին, օդին ու արեւին, որոնցմէ ճակատագրուած է ան ծծել աւելն իր կենսունակութեան:

Միտքէ չհանել մօտիկութիւնն այն օրն — րուն, ուր մարդկային ճակատագիրը, յանուն լուսաւոր տեսիլքներու իրագործումին, փորձեց հերոսական արշաւներ նոր ու արկածալից հողերու վրայ: Եւ արշաւները չեն կասած տապալան: Ձէ նոյնիսկ նուազած՝ անոնց թափը: Անխնեւու ահազնազորդ վազքը դեռ կը սարսռէ մեզ, ու կը լսենք պահուցիչ արձաղանդը անոնց շնորհներուն: Մեր նայուածքին երկինքին մէջ կը բացուին լիճներ մեծ լոյսերու, ու ձեւ կ'առնեն խաւարի սեւ կղզեակներ: Հորիզոնին վրայ կը փչին շեղբեր կայծակներու, ու երկիրին խորութիւններէն փոթորիկներ կը թաւալին:

Բնական է որ այդ սերունդին երգն ըլլայ բազմաաւար ու ալլապան, անհամապի նոյն իսկ: Բնական է որ անոր նուազին կ'ընդօրինէ չպայմանաւորուի զգայութեան ու մասնուէի, տեսիլքներու եւ ցանկութեան նոյն տրոփէն: Ամէն միտք ունի իր զարկը, ամէն յուզում՝ իր թրթռումը, ամէն տեսիլք՝ իր լոյսն ու ստուերը: Հետեւաբար, ամէն նրանաստեղծ հոգի՝ իր լարը, կամ լարերը՝ անհրաժեշտօրէն անաշխատան ու անձնադրոյմ: Եւ սերունդի մը քընդարկան հողինքու լարերուն միահամուտ յաւիւնն է որ կը յօրինէ համանուագային մեծ երաժշտութիւնն անոր: Այլապէ՞ս ու երևութապէս անհամեմատ՝ այդ լարերը: Ի՞նչ փոյթ: Սերունդի մը կենսապրօնող ճիւղերուն համանուագայ չի հպատակիր դաշնակութեան ընթացիկ, հանրամատչելի օրէնքներուն:

Ամէն մէկը լուսաւոր այդ հողիներուն պիտի ունենայ նկարագրի սեւեռուն իր գիծերը, եւ պիտի յարգէ՝ պանծնէ: Պիտի գիտնայ ըլլալ ինքզինք. բայց պիտի գիեցնէ իր մէջ նաև մասնիկ մը՝ ճակատագրակից հողիներու ընդհանրական ոգիէն: Այդ մասնիկն է որ պիտի ըլլայ պատասխանատուն՝ դաշնակութեան

զարդանիւթին: Անով պիտի կշռուի անհատի բաժինը համանուագին մէջ:

Հիմա, տողերէն ներս «Տուներու Երգ»ին, որոնումի ալ ուղիներով:

Մ. Իշխան, բանաստեղծը իր մէջ, ունի նկարագիր, նուրբ բաց խորունկ ու անխաթար դիմերով: Եւ տէրը այդ նկարագրին դիտել յարկն զայն: Այսինքն՝ ըլլալ ինքզինք: Արժանիք մը՝ ասիկա, որ հաստատակոտած իր ձեւով պիտի առանձինն բաւէր յանձնարարելու բանաստեղծը մեր յարգանքին: Մակայն, արուեստագէտը, որուն՝ աղնակալն է կաւը, չի հետապնդեր մեր յարգանքը: Մեր համակրանքն է իր հաղ, ամբողջական ու չսակարկուած համակրանքը: Առանց անոր՝ քիչի միայն կը դիմանան սպառումին: Կը դիմանան՝ ուսուցիչ միսն իրենց ուղեղին: Այսինքն՝ մեծնելով, քիչ քիչ ու յարատեւօրէն: Մ. Իշխանին չէ ընդպստեր նման ճակատագիր մը: Առաջին գէթ՝ յանդիմանութիւնն իր արուեստին հետ՝ կ'ընծայէ զայն սիրելի:

Տարբեր էր նկարագրիւն:

Համեստաքիւ՛ն՝ առաջին գիծի վրայ: Խոնարհ է իր կեցուածքը հանդէպ կեանքին, մարդերուն, իրերուն ու արուեստին: Եւ ի՞նչ փորձութիւններ կը խնայուին իրեն, պարզապէս որովհետեւ դիտէ մնալ խոնարհ: Կը շահի լուրին, կը շահի երեւակայութիւնը, կը շահի յուզումը որ կը վազէ տողերուն երակներէն: Իր ձայնին վրայ կ'իջնէ խորհրդաւորութիւնը վարպետի մը, մ'յն ռուպէն՝ ո՞չ կը վախնանք թէ՛ պիտի փորձուի ուսմանութիւնը պոռնալուն: Բասերը կը քային տողերուն մէջէն՝ առնադուի եւ առանց ցուցամոլութեան, իրենց վիճակուած աղնիւ դերին գիտակից մարդերու լրջութեամբ: Պատկերները, ծանրօրէն օրօրուն: Կը խորշին ձեւի ու գոյնի խառնեայ շեղանքէն: Շունչը, որ կուտայ ջերմութիւն ու բարախում՝ երգն յօրինող իր բառերուն, չ'ապուկեւր մեր զգայարանները՝ ուշադրութեան կանչող սաստկութեամբ: Միշտ ծանոթ են ակունքները ուրիշ սիւղի կ'առնէ վտակն իր յուզումին, ու կը հոսի կշռաւոր ու մեծցող ալիքներով, բայց երբեք չի սպառնար պայթիլ, ահաբեկիլ մեզ: Իր ժուժկաւորութիւնը, սակայն, զերծ է ամբացը-

նող կամ կազմակերպչ նկարագրերէ: Իր համաստեօթիւնը՝ խոնարհութիւն մըն է ազնուական, որ կը թոյլատրէ մտերիմ առընթերցութիւն մը կեանքի երեւոյթիւնուն հետ եւ կը տանի զինք մօտիկը, շատ մօտիկը ճշմարտութեան:

Հաւատարմութիւն: Պարկէշտութեան պահանջութիւն մէջ, ոչի՛նչ այնքան անողորձէն խստախիտ է որքան արուեստը: Ո՛չ ոք կրնայ խաղաղասեղէն հոն ու մնալ անպատիժ: Պարկէշտութիւնն իրեւ պայման այնքան անգանցառելի է արուեստի մէջ, որ ա՛յլ կը դադրէ ըլլալէ յարադիր ստորագրելի մը անոր, ու կը դառնայ մէկ մասն անոր էութեան, էութիւնն իսկ: Եւ արուեստագէտին պարկէշտութիւնը՝ անոր հաւատարմութիւնն է՝ ստեղծագործութեան իր աւաղանին մէջ թափող սկզբնական ակունքներուն հանդէպ: Ուրեմն, նախ՝ ճանաչու՛մք անոնց: Հաճոյք մըն է հաստատել թէ Մ. Իշխան օտար մը չէ ինքն իրեն: Աւելի՛ն՝ նախածքի միտահնչիլ նորութիւնը մը խուզարկած է ինքզինքը ու կը ճանչնայ թէզման իր կտաւին թել ալ թել: Գիտէ կշռոյթն իր մտածումի զարկերուն, թրթռականութիւնն ու տարողութիւնը իր ջիւղերուն, եւ միտանալով՝ կարելի տարածութիւնը՝ տեսողութեան իր դաշտին: Գիտէ՛. եւ ազատ է սահմանազանցումի յանցանքէն: Մեղք մը՝ սա սահմանազանցումը որ կորուստի առաջնորդեց նոյնիսկ ընտիր խառնուածքներ: Անհնար իրական չափն ուժեղուզ, պուշկիկ հորիզոնը թռիչքիդ, ու վստահի՛լ անոնց: Ձր դիմել կեղծուած գոյններու, շլացուցիչ շար՝ ժուձեւերու կամ մուրացածոյ շեշտերու, այլ ապակիներ՝ զոն քեզի, մնալ հաւատարմի՜ զուսնծիդ: Առանցիկութիւն մը՝ ասիկա, որ կ'ենթադրէ խորունկ վստահութիւն մը ինքն իր վըրայ, եւ կը բացատրէ գաղտնիքը Մ. Իշխանի նուաճող հանդարտութեան: Ուրիշ մէկ դիմը իր նկարագրերին:

Հանդարտութիւն: Ձգտութիւն այս յատկութիւնը՝ ջիւղերու թանձրութեան կամ անոնց ողբալի բացակայութեան հետ: Վիճակներ՝ որոնք անվերականգնելի դատապարտութիւնն են հոգիով պառաւանդուն: Անոզը ու զօրեղ ջիւղերն են յաճախ ամենէն հանդարտները: Ձեն.

Թաղրուի, դարձեալ, թէ՛ առաջ կը բերուի այս կէտը իրեւ հակադրութիւն՝ բարբորուն ու բուռն խառնուածքներու, որոնց ուղուի գերադասել զայն: Արուեստը կը մերժէ ուսիկ նկատումները ընթացիկ բարոյականին, որովհետեւ ինքն իսկ է բարոյականը: Վիճակներու շահեկանութիւնը կը պայմանադրուի միայն անոնց բաժինովը՝ ստեղծագործ աւելին մէջ, եւ անդրադարձովը՝ յօրինուած երկին վըրայ: Վերի այդ իրայայտնութիւնն, գրեմն, նախ՝ անոր համար որ ճշմարտութիւն մըն է ան: Այսինքն, հանդարտութիւնը տիրող գիծ մըն է ճշունեւորւ երբք՝ համերգող բանաստեղծին նկարագրիին մէջ: Յետոյ՝ որովհետեւ անհրաժեշտ է ան՝ կարենալ արդարութիւն ընելու հեղինակին զործին: Հարկ է տակաւին մասնաւորել: Ներքո՛ք է իր հանդարտութիւնը, խորատուզուող ու խռովիչ: Հասկնալի է որ իր տողերը շունչուն փոթորիկէ, ու մենք շլտեք ճարճատիւնը ջիւղերու՝ սահանքին մէջ բառերու, որոնց առանձնայատկութիւնն է ըլլալ հոսանուտ ու հեղ մանաւանդ: Իր երկերը կու գան կենսեքին՝ խորհուրդով հովանաւոր ու յուզումով բարբախտ, ու կը շնչեն մթնոլորտի մը մէջ ուր արդիլուած են աղօթիկն ու լայն շարժումիդ հետ ու կ'առաջնորդէ զայն տրտում ու որ կը թափանցէ միտերէդ ներս, կը բռնէ ջիւղերը ու կը մնայ աէ՛րը անոնց: Կը քալէ մտածումիդ հետ ու կ'առաջնորդէ զայն տրտում ու խելօք բայց լուսաւոր ու յայտնաբերող թափառումներու: Ահա թէ ինչո՛ւ ներօրը, նուաճող ու խռովի՛չ է նոյնիսկ իր հանդարտութիւնը:

Ասոնք՝ ամենէն ստոյգ ու բնորոշ գիծերը իր նկարագրերին:

Բանաստեղծ հոգին այդ տղուն՝ ունի դեռ երանդներ, խառնուածքի յայտարար նիւեր, որոնք անձնայատուկ ըլլալէ աւելի՛ կը կրեն քիչ մը ընդհանրական բնոյթ: Այդ պատճառով, սակայն, երբե՛ք դուրսի՛ շահեկանութեան: Ժիշդ է աւելի՛ հակառուկը՝ Կ'ապացուցանեն անոնք ազգականութիւն մը՝ նորէն մարդերու լեզուով խօսող բայց ուրիշ լոյս մը ճառագայթող հոգիներուն հետ: Կա՛ն եւ գիծեր որ կ'արտօնեն բարեղէկ բաղդատութիւններ, կամ կը

զետեղեն զինք չըմանակին մէջ տղոց՝ որոնք կ'եղբայրանան իրարու՝ իրենց ճակատադիրով։ Ու դեռ մարդ կը փորձուի ճանչնալ իր մէջ վերկենցադումը՝ անթօթափելի մեր առնաւորներէն եկող ժառանգութեան մը։

Թախիծ։ Իր երակներն ունի ան՝ ամենէն խորերը մեր ցեղին հողիին։ Եւ ո՛վ որ կ'ապրեցնէ իր մէջ մաս մը այդ հողիէն, ճակատագրականօրէն կը գտնէ իր մտածումը հովանաւորում՝ տրտմութեամբ բոսոր – կապուտ մշուշի մը։ Հայ մըն է Մ․ Իշխան, եւ աւելին՝ բանաստեղծ։ Ինչ որ կենքը, սիրապարօմ մայրութեամբ մը թերեւ, կը յաջողի վարադուրել միաներէն, անողորձէն կը բանայ աչքերուն դէմ անիծապա՛րտ իր այն դասակնեւրում՝ որ, իբրեւ միթիթարութիւն անկասկած, բանաստեղծ կը յորջորդուին մեր այս հողին վրայ։ Եւ չէ միշտ վարդազոյն՝ ինչ որ կը տրբուի տեսնել անոնց։ Անա թէ ինչո՛ւ, առնասարակ, տրտում ու աղօտափայլ խոնաւութիւն մը կ'օծէ անոնց նայուածքը։ Անա թէ ինչո՛ւ, կրկնով սա պատճառներով, թախիծ կը բնակի մտածումին ու աչքերուն խորն այս տղուն։ Չըսուեցաւ թէ առաքելութիւն մըն է այդ, թէ եւ յաճախ կ'ընէ նայուածքը խորունկ ու խորհրդով բեռնաւոր։ Կայ նաեւ վտանգը զառաժուակն, եթէ թանձրանայ ան ու իսթարէ տեսողութիւնը։ Չափաւոր, ընարական ու մտերիմ է Մ․ Իշխանի թախիծը, ու կ'արգիլէ մեկի զիւրթիւնը չարագուշակ ենթադրութիւններու։ Ըլլալով հանդերձ անձնական, այդ թախիծն ունի ընդհանրական, հետեւաբար նաեւ զիւրահաղորդ ու համակրելի նկարագիր մը։ Իր մտածումին վերեւ՝ ծփառուտ մուշ մըն է ան, որ ցաւազին զգալութիւններու սարսուռը կը թափէ տողերուն խորը, զայն հոսեցնելու համար յետոյ մեր միտքուն մէջ։

Մտերմութիւն։ Դէմքի ծանօթ գիծերու, ընտանի շարժումներու, շատ լուսւած ձայնի մը ա՛լ անզգադտապահ չեչտերուն սովորական մըտերութիւնը չէ իրենք։ Երբ թափանցում մը փորձենք այդ տղուն զգայական ու իմացական աշխարհէն ներս, իրաւ է թէ արկածախից հանգիւղումներու նախազգաց խոտիքին այլապէս երջանիկ զոզը չի բունք մեր հողին։ Իրաւ է

թէ կ'ուենեսնք երաշխաւորուած ապահովու – թեան մը ամբողջ խաղաղութիւնը։ Բայց մեր ճիւղ երբեք չի մնար անվարձ։ Կը համոզուինք թէ ամենօրեայ երեւոյթներու, ընտանի ձեւերու հիսթալիտութիւնը ինչայուած է մեղի՛ իմաստուն աղնուութեամբ մը։ Իր ձայնը կը պահէ նորութեան ամբողջ հմայքը, բայց կ'ըլլայ նաեւ քաղցր՝ անցեալէն եկող արձագանդի պէս։ Կր զգանք մօտիկութիւն մը մեղի՛՝ որ վստա – հուսիւն կ'ապացուցանէ։ Իր բառերը կ'ըլլան համարձակ, ալլ առանց յաւակնութեան։ Կր խօսի լեշտով մը նո՛ր, բայց հողիովն ինչ բարեկամի մը որ ա՛լ վերապահութիւն չի ճանչնար։ Վերապահութեան այդ պակասը չէփոթել ողբալի այն միամտութեան հեւ որ կը դարձնէ՛ մարդերը շատախօս, առանց իպնտեփ պատմել տալու աստիճան բաներ որոնց եղելութիւնը կ'արդարանայ մի՛այն չըսուելով։ Իր ըսա՞ծը։ Անոյ ռու տրտում մտածում մը երբեմն, լուսաւոր՝ յայտնութեան մը պէս, որ մեզ կը տանի նոր իմաստի մը արկունքին։ Պատկեր մը՝ որ կրկնազորէ զաղափարի, տեսիլքի կամ ցանկութեան մասնիկ մը, ու կ'օծէ մեր տեսանելիքը թաթմ վայելքի մը երանութեամբ։ Ողկոյզումը անկրկնելի վայելքներու, որ մեր սերունդին տրուեցաւ ապրիլ մի՛այն երազով։ Այսինքն, միշտ բան մը՝ որ ապահոված ըլլայ ըսուելուն իրաւունքը։ Ու ձայնը, չէ՛շտը, որով կ'ըսուին անոնք, վստա՛հ է ու վստահող անոյ ռու մըտերիմ։ Եւ պզտիկ չէ ապահովութիւնը որ այս առաքելութեամբ կը ստացուի հետադարձութեան մեղքին դէմ, թէ եւ կարելի չըլլայ անոր վտանգաւոր կախարդանքին փորձութիւնէն բոլորովին զերծ յայտարարել բանաստեղծը։

Զգայմտութիւն։ Կ'ուզենք որ բառը թօթափէ իր քիչ մը շատ ընթացիկ, գրեթէ դաւիթ իմաստը, զանազանուելու համար ամուլ այն տպաւորականութենէն, որ կը մնայ յաւէտ կրաւորական, եւ իր արտայայտութիւնը կը վստահի արիւնէ ու ջիւղէ զուրկ տողերու, յաճախ՝ ապերժանիկ ձայնարկութիւններու։ Մ․ Իշխանի մօտ, որքան սիրտի՛ նոյնքան միտքի՛ միճակ մըն է ան, որ իրական կեանքի երեւոյթներուն եղերական ճշմարտութեան թափանցումէն։ Եւ թէ ջիղերու նուրբ ցանց մը տպաւորուելու տը

բւժադիր կը պահէ իր զգայարանները, զգայութիւնները սակայն կը փութադրուին միտ - քին աշխատանոցը, ուր անոնք կ'ըլլան յու - զո՛ւմ ու մտածու՛մ՝ նոյն ատեն։ Այսինքն, մր - տածու՛մ՝ որ ունի ողորդականն իրւն խորք։ Եւ հատորը, որ նիւթի միութեան գծի մը կը պահէ ծայրէ ծայր, իթէ չի պարզեր երիտա - ւարդ հեղինակին զգայութեան բոլոր երեսնե - րը, կը բերէ սակայն մեր ըմբոխնումին՝ ճոխ գանգաւնութիւն մը անոնցմէ։ Ուշագրաւ է որ անոնք թեւադրուած ըլլան իրեն՝ ո՛չ այնքան մտրմանկան, որքան ուղեղային ապրումներէ։ Ինչ որ կ'երգուի, կեանքի եղելութիւններէն ա - ւելի՛՝ չվայելուած երանութիւններու ոգեկո - շումն է, կարօտը, երազը, ցանկութիւնը, տե - սիլբը անոնց։ Ճիշդ է թէ գերակշռօրէն տու - ներու գաղափարն է որ կը տանի միտքը ստեղ - ծումի աշխատանքին. բայց տուները խորհրդ - րանայններն են վիճակներու որոնք սրտառուչ յատկութեամբ մը կը ներկայանան իր մտա - ծումին ու կ'ընեն տրտում կամ ուշադր իրենց պատմութիւնը։ Այս կէտին վրայ, անկարելի կ'ըլլայ գիմարել մէջէլէւս՝ փորձութեան.

«Կ'անցնիմ երբեք մարտուն, հոգիս ըրած հազար մաս...

Տաւե՛ր, տունե՛ր բազմազան քովերմ ի վեր փոքոցին, Տրտում, գրաւք, փոքր ու մեծ՝ բոլորն իրար սեղմուած, իրենք ինքն ինքն քովերմ ի վեր միասին։

Կը դիտեմ լուս, եւ հոգիս կը յեցուի խոր երգերով, ձաւբուս վերայ՝ քարացած վէպ է անբառ ամէն տուն Եւ մէյ-մէյ գէմք կեցողանի ուր կայ ըստուեր լոյսին ինքն, Ուր ակօսներն են նստած կեանքի բոլոր հերկերուն։»

Կեցուցէք ձեր մտքին մէջ՝ տղան, որ կ'անցնի օտար քաղաքի մը փողոցներէն, «Հո - րին ըրած հազար մաս», եւ մտածումը՝ յաճա - խանքին տակ հայրենական իր անձնաթիւ ու ա - ւերակ երդիքին, կամ զրացուած պոստիկ տունի

մը անփառունակ կարօտին։ Փորձեցէ՛ք յորինել միտքի ու հոգիի աշխարհն անոր՝ որ ամբողջ էութիւնը քամած խոնաւ իր աչքերուն մէջ՝ «Կը դիտէ լուս եւ հոգին կը լեցուի խոր երգե - րով»։ Այն ատեն միայն կը պայթի ահաւոր ի - մասսոր ամառ տողերուն, որոնք ամբողջ սերունդի մը ցաւն ունին իրենց իրականերուն մէջ։

«Եւ մինչ ամէն, ամէ՛ն մարդ աշխարհիս մէջ ունի բոյն, Ունի մահաւում դէմ պատուար՝ սերունդներու լուս վրկան, Հայու Որդին, ե՛ս միայն կը քափախիմ հոս անոնում...»

Իր յուշումները օգէն կանչուած կամ հովա - րէն ապսպրուած չեն բնաւ։ Ունին միշտ ան - ժխտելի իրողութիւն մը իրենց ետին։ Ահա թէ ինչո՛ւ վաւերական են անոնք ու վարակիչ, նե - րամփոփ ու զուտ քիչեւ, բայց անդիմադրելի։ Եւ կեանքի այդ իրողութիւնները չեն ընդունիլ անհատական ալլամբիք ու նեղ պարեմակն ի - րենց սահման։ Կը ներկայացնեն անոնք լայն, բնդհանրական շահեկանութիւն մը, որ կրկնա - պէս կ'ապահովէ հաղորդական նկարապիւր մը իր զգայութիւններուն։ Իր երգերը, թէեւ միտ - քի վայելք մը նոյն ատեն, կը փնտռեն մահա - ւանդ մեր սիրտը, ու կը գտնեն զայն։

Նիւթը։

Ամենէն աղուորները սիրոյ երգերուն, զանոսօրէն անոյշ ու եղբականօրէն իմաստուն, անոնք են մանաւանդ՝ ուր տառապանքն իր սափորէն է պարպած։ Ի՛նչ հեղանք, որ երա - նութեան մը վայելէին աւելի՛ զրկանքն բոլոր աւաղանի ստեղծումի աւելին։ Սրբապան խնայ, Մէճնոնի բանաստեղծ... Հարկ եղաւ որ բո - ցեղէն լէյլլայի մը տեսիլքէն կայծակնաւոր ըլլար այդ իմացականութիւնը, որպէսզի՛ Սէ - րէն ու աւագահիւր անապատի արեւէն տողորուն իր շրթունքները բարբառէին ցաւաղին իմա - սութիւնը կեանքին։ Որպէսզի՛ ըլլային իր եր - գերը հեղին բաժակներ, ուր Սէրն իր գինին է թափած՝ արեւայեղց ու փրփուր։ Ոչ նուազ եղբրական է ճշմարտութիւնը օրէնքին՝ զոր ճակատադիրին պղինձէ ձեռքը խորագրուած է էջերուն մէջ՝ Հայ բերթողութեան, Քուչակէն

ու Սայաթ Նովայէն մինչև Դուբեհան ու Թէ-
թէան:

Այդպէս է, դարձեալ, որ տուները, յիշա-
տակն անոնց անցելատալ պատկերին, կարօտը՝
բացակայ իրենց մտերմութեան, խորհուրդը՝
որ կը բնակի անոնց որմերէն ներս, երանու
թիւնն ու տրամութիւնը նաեւ, լոյսն ու սուռե-
րը անոնց, լացն ու ծիծաղը, նուազն ու լռու-
թիւնը, օրհնութիւնը սեղանին եւ «յուշիկ հեւքն
օրօրոցի մանուկին», հրաշքը ծնունդին եւ ա-
ռեղծուածը մահուան, վէպերն ու ողբերը «քա-
րացած», պիտի երգուէին քնարին վրայ աքոռ-
րական քերթողին: Անո՛ր, որուն՝ ճակատագի-
րը մերժեց իրաւունքը հայրենական երգիքի մը
հովանիին, քինախնդիր քամիին դէմ անբարե-
կամ օրերով:

Մերժե՛ց: Ըրաւ զայն թափառական ու
թշուառ, որովհետեւ՝

«Ո՛րիծաղն է լաց, երբ մարդուն չի տար իր
տունն արձագանգ»:

Ու խորացաւ կարօտն անոր նայուածքին
մէջ, ամէն անգամ որ իր քայլերը կանգ առին
պարզ ու պարզեղտ «բրձիթի մը սրտաբաց պա-
տուհանին դէմ ցածրիկ», կամ, «հոկայ չէնքի
մը դիմաց»: Եղան իր աչքերն ստուերամած ա-
ւաղաններ, ուր ինքզինքն զգաց ճակատագրա-
կից սերունդ մը ամբողջ:

Ջարջարադին ու ոտնաբոլիկ մանկութենէ
մը վերջ, երբ սարսաղացին թեւերն իր հոգիին՝
նորարաց յոյսին դէմ կենքի, հաստառեց ող-
բայի անցօրութիւնն անոնց թեւարախումբին՝
այլուրութեան մէջ տխուր: Ու դրաւ իր հոգին
իր աչքերուն մէջ ու նայեցաւ տուներուն, քար
խիղճերով քաղաքներու կառոյցներուն քարե-
ղէն, չռհիներու անտառի մը խորը սուղուած
դղեակին, կործանած տաճարներուն, նորակա-
ռոյց չէնքերուն, ու տուններուն տարադիր, հիւ-
ղեպանին հայկական՝ «հին քուրջներու, թիթեղի
շեղակոյտով բեռնաւոր»: Նայեցա՛ւ անոնց...
ու եղան անոնք երազ ու տեսիլք, ցանկութիւն
ու ցնորք, բայց նաեւ յուզում ու երգ, քնարե-
րակ մտածում:

«Տուններ կան խեղմ, բազմատանց, ուսը
կրթած, դուռը փակ,

Տուններ կան գորշ, հիւանդկալ, որոնց դէմ
մարդ կ'ուզէ լալ,
Եւ կան տուններ ալետուր, տարիներու բռնամ
տակ,
Որոմք մահուան կը մային արդէն հանդարտ,
ամայլայլ:»

«Կեանքի խորհուրդը ամբողջ այդ յարկերուն
տակն է լոկ,
Հո՛ն է որ բախտը մարդուն կ'իջնէ տըխուր
կամ ուրախ,
Եւ անոնց մոյն յատակին կը հանգչի միշտ
սա՛նէ հոգ:

Սիրոյ մահին, օրօրոց, հացի սեղան ու
դագալ:»

Տուններուն մէջ բազմազան, ի դո՛ւր փնտ-
ռեց ա՛յն՝ որ պիտի ըլլար իր «մօր հոտով օր-
նուած ու հօր փառքով անբասիր», «հեծկը-
տուքն իր թաղելու իրրու միա՛կ ապաստան»:
Պարտատուն իր քայլերուն դէմ՝ դուռը բացաւ
ամէն տուն, «պապենական տունէն դատ», ուր
դտաւ միայն «ուրիշներու ոտքերուն թողած
գարշա՛նքն ու փոշին»: Այն ատեն, զգաց ինք-
զինքն անյուսօրէն աղքատ, անբեւեռ ու կոր-
սուած:

Առանց փաքիլի բու յարկիդ, ո՛վ տընակն իմ
հայրական,
Աշխարհն այս շատ է անհուն կեանքին համար
անմշան...»

Նոր շինուող տունն է ա՛հա: Լքուած այն
հոգին վրայ,

«...Ուր կիսամերկ մանուկներ
Ել խաղային օրն ի բուն՝

Կառուցման տօն է այսօր, աշխատանքի
եռուզեռ —

Ներախրաշ յարութիւն...»:

«Ջրաւթ լոյսին մէջ գարման՝, քարերու
կոշոյ կտրծֆին դէմ՝

Կ'երգեն մուրճեր մեծագօր,

Կ'երգեն վաստակն ըստեղծող՝ նոյնքան

մա՛հուր ու վրեմս՝

Որքան մանգաղն ու արօր...»

Աստուծոյ այս հին աշխարհին մէջ, մարդը
կ'իւրակերտէ իր բազուկներով՝ աշխարհն իր

նոր ու սիրած, իր հուզիկն պատկերին պէս: Կը չխտուին իրարու քարն ու հող հապած մարմինն ու հոգին:

«Եւ օրէ օր, ժամէ ժամ կը բարձրանայ տնեզագին

կոթողն հսկայ մէկ շէնքի.

Որումն հիմքին, շաղախին, որմերումն մէջ կը դիպուին

Քրտինք, համեար ու ոսկի:»

Դէպի յաւերժութիւնը սլացող իր անյայկ կարօտին մէկ ժայթքն է ան «քարացած», ամբարձիկ մարմնառութիւնը մարդու տեսիլքին, «արմատներն իր մխրճած տաք սրտին մէջ մայր հողին»:

Բանաստեղծ մտածումը քերթողին՝ կը բաժնուի ներկայէն, կը սուղի օրերուն մէջ գալիք ու կը կարգայ մեհնադրոյն այդ տան ճակատագրին: Կը տեսնէ, ահա՛, դէմքերը բոլոր, որ «ծովի գոյն» այդ լուսամուտներէն պիտի հսկին դուրս՝

«Ըսպատմով, կարօտով, մերթ ցնծութեամբ շոգարձակ,

Մերթ սրտաքիչ ու անոյռ:»

Եւ իր հոգին, «տարիներու ընդէմէն», կը լսէ «բոլոր բառերն ընտանի, խնդն ու տաղերը չաղուան», որ պիտի հնչեն «աղուոր» ու «անոյռ» այդ սենականերուն որմերէն ներս:

«Երանութիւն է այդպէս, չըմեռած՝ շէնք մը կերտել

Հոյատեսիլ ու հրապարտ,

Յետոյ իր դէմ՝ յաղթակա՛մ կանգնել, դիտել ու ըսել,

— Այս իմ տունն է հարազատ:»

Բայց դիտէ Հայուն թափառական այդ գաւազն, թէ նորակաւոյց մեր Հայրենիքէն դուրս պիտի երթի՞ք մարմին չառնէ իր երազը, ուժեղ իր բաղնիկները պիտի բնա՛ւ չճանչնան երանութիւնը ստեղծագործ մեր դատանքին, ու ցաւազին յուզումով մը պիտի ըսէ ինքն իրեն՝

«Կ'անցնին օրերըս ի գուր, բայց չըզարկի մուրմը մը դեռ,

Քար մը քարին չըզըրի:»:

Այն տանն, սրտագին կարօտով մը պիտի մտածէ «Հայաստանի Բանուորներուն» որոնք՝ «Հազիւ անցած մեր արիւնին ծովերէն՝ նոր ձեւ

ու կենքը կուտան երկրին մեր աւեր»: Հոգետեսուած եռանդին մէջ աշխատանքի ասպետներուն, պիտի ճանչնայ աննուանելի վերակենցաղումը ցեղին, եւ հոգին դրած բառերուն մէջ, պիտի քնարերգէ իր ողջոյնը «Լիրանանի սա հեռաւոր լեռներէն»:

«Երմէ՛կ ձեզի, ձեր տոհմերուն տակ գտնէ

Ափ մը հող կայ դեռ մեր հողէն հըմամեայ, Որումն աւիշմ արդ ձեր հողին կը վառէ

Եւ ջուրն հըզօր ձեր արեան մէջ կը թնդայ:

Ամեն մէկ տուն, որ կը կանգնէ՛ դուք հիմակ, Եւ հայ մանկան անուաղիմով կը լեցուի՝ Ե՛րբ է պայծառ, մէյ-մէկ անհղ յաղթանակ՝ Նետուած խցին դէմ աշխարհին վայրենի:»

Այդ մտածումը պիտի ըլլայ իրեն մխիթարութիւն ու զօրավիշ՝ սրտապնդիչ այն իրողութեան հետ որ Հայ լեզուն է, մայրապարտով ապաւէնը ցեղին տարագիր զաւակներուն:

«Հայ լեզուն տունն է Հայան, աշխարհի չորս ծագքերուն,

Որ կը մտնէ ամեն Հայ իրրեւ տանտէր

հարազատ:...

Ո՛չ ոք այնքան լիովին ու այնքան ուժգնօրէն պիտի զգար երանութիւնը սա դիտակցութեան, թէ տէ՛րն ես այն տունին որուն սեմէն ներս կը կորինն ոտքերդ յոյնած, ո՛չ ոք այնքան՝ որքան անոնը որ մնացին դուրի՛կ՝ հարազատ յարկի մը անփոխարինելի քաղցրութենէն:

Դարբերու երակներէն՝ Հոսած է Հայ հոգին ու գանձարանուած այդ յարկին տակ, աշխատանքին ու թնութեան բարիքներովը յորդուն, «Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վառ»: Գեղեցի՛կ է ան ու մեծվայելուչ.

«Քանի՛ դարեր եւ Բանի՛ ճարտարապետ

համեարներ

Աշխատեցան անոր տակ վեհալիւն, գեղ պերճամէջ:...

Ուրեմն՝

«Հո՛ն է միայն, որ կըմայ գտնել ամեն հայ կրկին

հոգին,

Անցեալն անհուն եւ ներկան, նայն իսկ մթի՛ն ապագան...»

Կը զօտեպնդուի բանաստեղծը կրկնակ այդ մտածումներով — տեսիլքով՝ հայրենի հողին վրայ մեր դարաւոր երազը քար առ քար հոյակերպ տաղթ մուրճներուն, եւ կորներուն դէմ մեկ պատկերիդ հայ լեզուին: Իր բառերը կ'ըլլան հաւատքով օծուն, ու կը պողպատանայ իր կամբը: Իր յորդորը շնորհումն է խրախոյսի մը՝ բոլոր անոնց որ յոգնած են ճախ կեանքի անպատկեր մէջ անծայր:

«Հնարիգոմիջ դէմ անվերջ թող երդիքներ պըսպըղան,
Աշտարակներ միգակուիմ երկիմքի քինս սիրտմ
Եւ թող արեւն հըրատապ, որ կը խանձէ
Բեզ այնքան»

Գմբէքներու կողմէ վար թափէ արծաթ-
ջրվէմներ:»

Թող փարատի՝ ներկային մոայլութիւն՝
յուսեղէն տեսիլքով դալիքին, որովհետեւ՝
«Ձրկայ ժրպիտ, արքեցո՛ւմ, առանց ոսկի
~երակի~...»

Ու ոսկի այդ երազն է որ՝ «Հողին վրայ հայրենուն» պիտի գերթնուածի մը նման՝ կերտէ՝ Վաղուան Տունը բանաստեղծին: Պիտի կերտէ՝ զայն, աչքերուն մէջ՝ հայրենական երդիքի մը կարտը անտուն բազմութիւններու, եւ բապուկին՝ շինարար ո՛յժն հայ հանճարին, տալով «մեր հին քարերուն» ըողէ շաղախն՝ իր արիւնին: Օ՛ր, սրտագեղումը միաժիտ սա բազմաճրին:

«Ի՞նչ յազբանիստ ու երպարտ պիտի ըլլաս
կեանքին դէմ»...

Պիտի ըլլայ անիկա՝ «Երուշաղմունք» կորստած իր մեռելներուն, ու կայսր՝ կեանքով յորդուն բայց բարի ու համեստ երանութեան մը, ուր զպիտի յառնէ մաս առ մաս հարազատ իւտմըն անցեալի իր մեծ տոհմին քարուքանդ, զպարթէն հասակն» իր եղբոր, քորիկին զգէմքը երազ: Բանաստեղծին հողին պէս բա՛ց պիտի ըլլայ դուռն անոր, հրաւիրող քաջութեամբ, ու պիտի լսուի հոն, ճամբէ աստու, երեկոյ, շէնչող քրքիլ ու զրոյց, երգերու ձայն ու նըւազք: Բայց պիտի ունենայ նաեւ պահեր լուութեան ու խոկումի, «մտերմութեան ու սիրոյ»:

«Եւ երբ անցմին առջեւդ աչքիկ, տըղայ,
փռու ու մեծ՝
Պիտի կենամ ու ըսեմ անոնք իրար ժպտալիք՝
— Այս է ահա տունը մեր բանաստեղծին որ
երգեց

Տուններու երգն ու երկար տառապեցաւ
տարագիր...»

Գիրքին վերջին տունը ասիկա, ու վերջին տունը՝ անվերջ այն երգին, որ կը մնայ բա — նաստեղծէն՝ ապերախտ այս հողին վրայ: Այս տողերը կը մերժեն նպատու՝ քաջատուութեան ո՛ր եւ է փորձի: Մտածումն անոնց մէջ լո՛յս մըն է որ հեռաւոր հորիզոնէ մը կը թափի քաջուելիք հեռաւոր օրերու սեմին: Ու լուսեղէն՝ նաեւ բառերը անոնց, յորինուած՝ սղաւոր այն լոյսէն որ կը թափառի կործանած ապարանքի մը մարմարներուն վրայ:

Արւեստը: Կարելի չէ արուեստի երկի մը ներքին բովանդակութիւնը՝ յղացք, խորհուրդ, միտք եւ յուզում, երեւակայութիւն ու տենչանք, երազ ու քմայք՝ անշտուել ձեւի մասնաշատուկ այն նկարագրէն, որով արտայայտութիւն կը գտնէ ան՝ խորքը: Որովհետեւ, արտայայտութեան ձեւը անխուսափելի դորձիկն տակն է արտայայտելի զգացումին կամ գաղափարին, տեսիլքին կամ պատկերին: Աւելին: Որքոր ներուժօրէն ունի իր մէջ, հեռաւարար կը բերէ իրեն հետ, նաեւ իր ձեւը՝ ենթակայ մի՛այն յղումի, բայց երբեք փոփոխութեան՝ առանց խաթարուելու վտանգին: Փոխարեութիւն, պատկեր, նմանութիւն, բառաշինութիւն, շարադասական զարուղութիւններ եւ ոճի ուրիշ յատկութիւններ, որպէս թերութիւն կամ բարեմասնութիւն, արժէք կը ստանան մանաւանդ իրրեւ վկայութիւններ արուեստագէտին ներքին աշխարհէն, իրրեւ կերպադրումը՝ մասնաշատուկ այն վիճակին, խորհուրդի եւ յուզումի այն միջնորարին, ուր կ'երկնուի գործը: Այլապէս, սահմանափակօրէն լեզուական պիտի ըլլար անոնց ներքին յացուցած շահեկանութիւնը: Գրադիտական սնտիք մը, եւ ա՛յլքան միայն: Այն ատեն, ի՛նչ տարբերութիւն՝ շարադասական ու լեզուական այլ յանդգնութիւններ փորձող նորոյթաւէր քերականին կամ գրադիտութեան գա-

ողդերքի մը հեղինակին եւ... ոճաբանին միջեւ: Լաւագոյն պարագային, պիտի գիշերէնք ճարտար խճանկարիչի մը արժանիքը միայն այս վերջինին: Բայց գիտենք թէ ոճաբան մը աւելին է, չա՛ր աւելին:

Եթէ բանաստեղծի մը արուեստին տար - ըրեն են ոճը, պատկերները, փոխաբերութիւնները, քերթուածին յորինումաճըը, տաղաչափութիւնն ու երաժշտական արժանիքները, այսուհետք, սակայն, աւելի՛ բան մըն է քան այդ բոլորը: Մտածո՛ւմն է նաեւ ու երեւակահայութիւնը, տպաւորութիւն ինքնայատուկ եղանակը, ու երեւոյթները մեկնելու իր մասնաւոր ձեւը: Ընդունելով բանն իր այդ տարողութեամբ, նախորդ հաստատենքուն մէջ արդէն յիշած եղանք բազմաթիւ ընորոշիչ դիժներ, որոնք կը յորինեն Մ. Իշխանի արուեստը:

Այստեղ, քանի մը յաւելումական ռօթեր՝ ընդհանրացումներու ի խնդիր:

Գիրքը կը բերէ երջանիկ ապացոյցը՝ ապահով ճաշակէ մը զեկաւարտած արուեստին, որ կ'անցնի արագ շրջափոխութենէ մը եւ կը իմէ՛ գէպի բիւրեղացում: Կը բաւէ բաղդատել սա երկու քերթուածները, « Անձնօթ Զայրեկին Տուն » (1932) եւ « Քաղցր է Երգիք մ'ունենայ » (1934), համոզուելու համար այդ ճշմարտութեան: Արժէքի մասը, ծանծաղած է գրեթէ, անհարկի ընդլայնումով մը մեծցրեղարձակ տարածութեան մը վրայ: Նորէ՛ն ներկայ, բայց տկա՛ր է երաժշտութիւնը: Տուրկան որ կը տառապին քաջաշուրջ ըսպառնացող կառուցումաճի մը վախէն, ու կան բառեր, որ իրենց շրջանակին մէջ օտար կը պլան իրենք գրենք: Աւելի կազմուած արուեստով մը՝ կարելի պիտի ըլլար քերթուածը սեղմել իր կէս ծաւալին ու շահի՛լ այդ փորձէն: Ապացոյցը կու գայ նո՛յն հաստիքէն: Երկու տարբեր սեղմ շրջան մը, ինքնամշակում մը անտեղիտալի լարումով, կը բաւէ որ ունենանք երկրորդ այդ քերթուածը: Իր նիթով ու զայն ոգեւորող շունչով՝ ամենէն աւելի լայն սահմաններ ընդգրկող կտորը հաստորին, կենսորով բարախուն եւ իմաստութեամբ օծուն: Ընթերցումը անոր՝ կը տեղաւորէ քաղցր յուզում մը երակներուդ մէջ ու կը բանայ միտքիդ՝ մտա-

ծումի հորիզոններ: Ու պոտիկ արժանիք մը չէ ասիկա՝ երգեցիկ ու թեւաւոր տողերով եօթը տուննոց այդ քերթուածին համար, որ ձեւի խնամքին կը միացնէ դիմացկուն խորք մը:

Կը խօսի՛ն թուականները, յորոնցումով, հաստարիմ նախանձախնդրութեամբ մը, բանաստեղծը նշանակած է երկնումն ամէն՝ մէկ քերթուածի: Կ'ըսեն անոնք, թէ յարատեւածում մը կ'ընկերանայ կազմաւորմանն իր տաղանդին, որ կառուցողական է իր նկարագրով, բայց կը սիրէ փորձուած ու հաստատուն, յաշխարհում յօրինումաճը: Կը խօսին, բայց չեն կրնար պատմել ամէն բան, չեն կրնար ըսել մանաւանդ թէ ինչու՞ իրենց ծնունդով կարճ տևողութեամբ մը միայն իրարմէ բաժնուած քերթուածներ կու գան կեանքին՝ իրարմէ ա՛յնքան տարբեր ու մերթ անհասարարժէքներով: «Կործանած Տաճարը», «Անտառին Հիւղը» եւ «Գնչուի Վրանը» քերթուածներ են որ «Նոր Երկուց Տունը», «Իր Տունը» եւ «Վազուան Տունը» խորագրուած քերթուածներուն հետ կը կրեն նոյն տարեթիւը (1936): Բայց ո՞վ պիտի կրնար նոյն երջանիկ տուրքերով օժտուած յայտարարել զաւտե՛ն: Առաջինները, նորէ՛ն օծուն՝ քաղցր այն թախիժով որ ա՛լ յատկանիշն է բանաստեղծին, ու նպաստաւորուած՝ հանդարտ ու օրօրուն այն մեղեդիով, որ ներկայ է գրեթէ իր բոլոր քերթուածներուն մէջ, կը յիշեցնեն, սակայն, մեր քերթողութեան մէջ քիչ մը շատ շահագործուած նիթեր, որոնք, իրենց թելադրած ծանօթ տրամադրութիւններով, դուրկ են անսպասելի յայտնութիւններու գրաւչութենէն: Վերջին շարքի երկու քերթուածներուն եղան՝ արդէն ակնարկութիւններով տարբեր հապտածներով մէջ: Աւելորդ է անոնց բոլանդակութեան ու ձեւին զեղեցկութիւնը, անոնցումով ի յայտ բերուած արուեստին առաքինութիւնները ներկայացնել փորձով վերադառնալ: Հիմա, քանի մը տող՝ այն միւս քերթուածին համար, որ «Իր Տունը» կը պատմէ: Գեղապէս ու բանաստեղծ է մտածուած այստեղ, եւ ըսելու թանկագին շնորհ, մը ինքզինք կը հաստատէ: Գեո լոյս տեսած զգայութիւններ կու գան լոյսին՝ նոյնքան անտիպ պատկերներով: Իր առնիք, րոակարանն իր սէրին, հիմա այլեւս մեռած,

հայրենական երգիքի մը չափ անո՞յշ էր ու սուրբ, Պորուն ճակոխէ՞ դարնանային ժպիտ էր միշտ, որուն կառոյցն իմ մէջ կ'իշխէր միշտ տիրական»։ Ան կը սպասէր՝

«Ինչպէս իմ փայլերուն ծանօթ
ձայնին,

Եւ իր ծաղկած պատըշգամէն զոյգ մը աչքեր
Կը յառէին անհետագոյ իմ հասակին»։

Տուն մը՝ որ իր սանդուխներուն հրաշքովը
«կը բանար ինձ վերելքն իրա՛ւ երազներուն»։

«Տուն մը կարած, — բայց ամբողջ ցա՛նձ,
ամբողջ խորհու՛րդ,

Որուն զանգն էր մատնեմուն տակ սարսուռ
ու զոյգ,

Որուն դռներն իբրեւ խոստում բացուած
անփոյթ՝

Կը հանէին երջանկութեանց դէմ
նարամբ...»

Թուականներու լեզուն կը մնայ մունջ, ու
կը խօսի օրէնքը՝ որ չէ գրուած բայց կ'այ՝
Ձեւը կը հպատակի խորքին։ Որքան ինքնատեպ,
խորունկ ու բո՛ւնը ըլլայ յղացքը՝ վճռայ նո՛յն
քան բախտաւոր՝ հեղուքը անոր։ Ու գերքն ու-
նի բերթուածներ, որոնց յղացքը զուպարկայած
է պարջանիկ վայրկեաններու։ Երբ կը խօսինք
Մ. Ի. խանի արուեստին մասին, նկատի ունինք
մանաւանդ իր ա՛յն քերթուածները ուր իրեն
հետ են բախտաւոր նիւթն ու չմիջատուած
ներշնչումը։

Մտածումը այն ատեն թաթաւուն է խոր-
հուրդով, 'պայծառացած՝ ներքին նայուածքի
մը լոյսով, որուն խուզարկու որոնումներուն
օտար չեն մարդերուն ու իրերուն գոյութեան
առեղծուածը, անոնց չնրպուած ողբերգութիւ-
նը, զղջումները, կարօտներն ու տենչերը։

«Մարդու երազն իմատում՝ պէտք էր ըլլայ
անկասկած

վերածաղկումն իր տեսնել գաւիի մ'անուշ
աչքին մէջ»։

«Երջանկութիւնը»

«Հոգիիս մէջ կուպար զղջումն ուշացած՝

Նայ մեղեքիս տակաւին տա՛ք մոխրին

վրայ»։

«Պրծի՛ր»

«Տուներն այնտեղ կը յառին կարօտաբաղձ
աչքերով...»

«Անգոր տենչով կ'երագնէ հորիզոններ

լուսայիր,

Հանդիսաւոր արշաւներ բըլբուլներու կողմ

ի վեր,

Ոսկի դաշտեր, նո՛ր աշխարհ ու կապաւում՝
ծովակներ...»

«Տուներ ճարագիր»

Այդ մտածումը դիտէ բանալ իր լոյսը հո-
գիի կեանքներու, տարտած վիճակներու ցւե-
ցէն ներս, բայց չի սիրեր յամենալ իր խու-
զարկումներուն մէջ։ Իրենը չէ վերլուծող նը-
կարագիրը որ իմաստասէրը պիտի յատկանը-
չէր։ Գերակառօն քնարական է իր տաղանդը։
Մեր բանաստեղծութիւնը ճանչցաւ երջանիկ
համարումը այդ երկու արժանիքն —
բուն՝ յանձին Թէքէեանի։ Մ. Ի. խան չէ՛ ան-
շուշտ Թէքէեան մը։ Եւ այդ՝ ամէն բանէ առաջ
իւր խառնուածքին բերումով։ Չկայ այստեղ
արժէքի բաղդատութիւն։ Այս տողերը կ'ըսեն,
մէջ իմացական Թէ Մ. Ի. խանի այս գիրքին
տարբեր ներկայ է յուզումէն ու երեւակայու-
թենէն ստորագրած գետինի մը վրայ, առանց
այդ իրողութիւնն իրբեւ թերութիւն մը ընդու-
նելու, եւ մանաւանդ՝ վալիք գործերու հա-
մար, առանց տարբեր համեմատութեան մը
բաղձանքը յայտնելու, ինչպէս պիտի ընէր ինք-
զինք յարգող ամէն պարկեշտ քննադատ։

Երեւակայութիւն։ Միտքի երկրանշատ
թափառումները չեն իրենք։ Տեսլայոյց յափըշ-
տակութիւնները օտար են իր արուեստին։ Ի-
րապա՛շտ է իր երեւակայութիւնը, բայց ունի
նաեւ բեղուն մտաւարտութեան պահեր, ուր ո՛ր
միայն անսովոր յատակութեամբ մը կը վերա-
դառնան իրեն՝ ապրումած կեանքի ամբողջական
պատկերներ, այլ եւ միտքի յայտնատեսող սե-
ւեռում մը կարելի կ'ընծայէ տողանշումը գա-
լիք վիճակներու։ Իրապա՛շտ՝ որովհետեւ հա-
ւատարիմ է կեանքին, եւ ընդունակ՝ տպաւո-
րութիւնները հարգատօրէն վերարտադրելու։
Բայց նաեւ ստեղծագործ, ու մանաւանդ՝ պե-
ղատէր։ Երեւակայութեան ստեղծագործ նկա-
րողին է որ կ'ապահովէ իր բերթուածներէն
ոմանց՝ կախարդական, երազակէ՛րտ միջո-

լորտ մը, քնարական քաղցրութեամբ, ուր միտ-
քը կ'ըլլայ անձնատուր՝ երանաւէտ քմայքին։
րու («Մայրիկներու Վիլլան»): Գեղասէր՝ վր-
կայ իր պատկերները, գոյնի ու ձեւի վաւերա-
կան ճաշակով մը սեւեռուած: Խնթի երեսա -
կայտութիւն մը, սակայն, որովհետեւ իրենք չեն
արկածասէր խոյանքները, համարձակ ու լայն
թեւաչափումները, որոնք սիրելի յանդգնու -
թիւնները պիտի վարձատրէին: Հովիտի մը հո-
րիդոնն է իր սահմանը: Այդքան: Բայց քէշ չէ
ան՝ մէկու մը համար որ զիտէ ընակեցնել զայն
կարողանալովը բանաստեղծութեան:

Յիշողութիւն: Մ. Իշխանի երեսակայու -
թիւնը ունի իրեն հետ՝ նպաստը հաւատարիմ
յիշողութեան մը: Եւ կ'ուզենք որ բաւը այստեղ
գործածուած ըլլայ իր իմաստին ամենէն լիա-
կատար առումովը: Այսինքն՝ Նշանակի աբ-
նեստազէտի մը համար անփոխարինելի այն
տուրքը որ հնարաւոր կը զարմնէ իր զգայա -
լանքներուն՝ վերակոչել անցած, գրեթէ կոր-
սուած տպաւորութիւններ եւ ապրիլ անոնց
ներկայութեան պատրանքը: Սո'ւր է մանաւանդ
ձայներու, շօշափական զգայութիւններու եւ
տառադական տպաւորութիւններու յիշողու -
թիւնը:

Յօրինումով: Ըսուեցաւ արդէն, թէ ձեւի
նախանձարեւորութիւնը հիմնական գիծերէն
մէկն է իր նկարագիրին: Գիծ մը՝ ասիկա՝ որ կը
յատկանչէ նոյն ատեն դործերը մեր ամենէն
արժանաւոր միւս նորերուն: Փորձուած եւ ա'լ
նուիրագործուած ձեւերն են իր նախասիրու-
թիւնները: Անոնք մանաւանդ՝ որ պիտի ներ-
գընակուէին իր խառնուածքին, իր զգայու -
թիւններուն ու երեւակայութեան տանձնա -
յատկութիւններուն: Սյացիկ ու կարկառուն.
իրենց բարձրութեան մէջ չբ'ջորէն արհամար-
հոտ բայց նաեւ այնքան խցելի կառուցում-
ները չեն համերաշխիք իր նկարագիրին հետ:
Սնահալ թուիքներու արկածայից ողբիմառու-
թենէն աւելի՝ կը սիրէ ապահով թեւածումնե-
րու երաշխաւորուած յաջողութիւնը: Քերթը-
ածիմը ճարտարապետութիւնը, անոր արտա-
քին ձեւն անցած ունի իր վկայութիւնը՝ ար-
ուեստապետին ներքին աշխարհէն, որուն կարե-
լի չէ դաւաճանել անպատիւ: Մ. Իշխանի տա-

ղաչափութիւնն ա'յնպէս է, ինչպէս կրնար ըլ-
լալ: Նուիրագործուած օրէնքներու սահմանին
մէջ, թեւաւոր է ան եւ օրօրուն, անբնաբոս
ու վարժ, դիմացկուն արուեստով մը ճարտա-
րապետուած: Ի՞նչ փոյթ, ինչէ կը պակսին ի-
րեն՝ Բ. Թօփալեանի մը երջանիկ յանդգնու -
թիւնները. կը պակսին նաեւ անոր վրիպում-
ները: Օրէնքներու խղճածիտ հպատակումը չի
սահմանափակեր ազատութիւնը իր արտայայ-
տութեան, որ ունի թանկարկին տուրքը երա -
ժըլտական ստոյգ բնագրի մը:

Ո՞ն եւ լեզու: Քնշութիւնն է յատկանշիչը
Մ. Իշխանի ոճին՝ բոլոր այն միւս ստորոգե-
լիներուն հետ ,որոնք յիշուեցան իր նկարագի-
րին առնչութեամբ: Հանգա'րտ, տաք ու ա -
նոյշ է շունչը՝ որ կը լեցնէ իր տողերը բոլորով
ու կենսեղով: Ծնորհալիութիւն մը կայ որ մար-
դերուն հետ կը ծնի, կ'օժէ անոնց շարժումնե-
րը, բառերն ու նայումները, ու չի բնաւ թե-
րանար, ամենէն փորձել բուզէներուն իսկ: Ա-
հա՛ նկարագիրը շնորհալիութեան որ իր ոճին
է: Բայց այդ քնշութիւնն ու գրեթէ ա'լ կա-
նացի շնորհալիութիւնը կը յաւակնին փոխարի-
նել շատ բան՝ երիտասարդ կորով, պայքա-
բատենչ խիղախութիւն, ճարձատուճ առնա -
կանութիւն ու երկաթաճանց ճանչչուններ զու-
շակեւ տուող կամքի թափ: Սակայն, ո'վ գատի
կանչեց Մեծարենցի ոսկորները՝ պարզ այն
պատճառով որ վարուածն չէր իր անունը: Ու
ճի'շդ է տակաւին, թէ իր ոճը, զարձուածքներն
ու պատկերները, կը պատահէ որ ծանօթ ա -
նուններ թիւյլադրեն մեզի: Մեծարենց, Տէր-
եան, Թէքէեան եւ Զարիֆեան, ու նոյնիսկ մէկ
երկու անուն նորերէն, ունին Մ. Իշխանի ար-
ուեստին մէջ ազդեցութեան իրենց բաժինը,
մեծ կամ պղտիկ շու'քը իրենց հասակին: Բայց
ո՛ճ մըն է իրենը՝ որ ունի համարձակ ու վրե-
տահ իր ինքնատպուլութիւնը, անշփոթելի՝ իր
հեզասահ, օրօրուն, զուսպ բայց ոչ ժլատ,
պատկերաւոր ու թրթրուն, առոյգ ու երկեցիկ
նկարագիրով: Իր փոխյարաբերութիւնները
չեն ճանչնար ո'ր եւ է երախտէ՛ր ո'ր եւ է գիրքէ:
Ճի'շդ են անոնք ու նո'ր բուրբոյժին: Ունի պատ-
կերներ որ կուտան մեր երեսակայութեան՝ ե-
րանութիւնը թարմ գեղեցկութիւններու վա՛ն

Եւ կայ տակաւին առաքինութիւնը իր լեզուին: Կ'արհամարհէ ան սնոտի ու ցուցամուլ քառյօցները, ու կը վնասող կատարելութիւնը ճշդութեան, նախընտրութեամբ մը՝ կարճ, քրեարական, պատկերաւոր բառերու, որոնց իմաստը կը վերանորոգուի, բովանդակութիւնը կը շահի՝ իր գրելին տակ: Կ'ըսես, կը յորդին անոնք յուզումով, տա՛ք ան Հոսանուտով զոր պաղտիկ ճառքաներէ՛ գիտէ՛ բանաստեղծն Հոսեցընէլ բառերու սիրտէն ներս:

Պիտի ուզէինք, միայն, գե'րծ տեսնել այ՛ լեզուն կարգ մը մեղքերէ, որոնց յանցանքը կ'ընծայուէր... Հա՛մբ է ըսել: Գիտենք թէ՛ ո'ւր անցան իր սա վերջին ութ տարիները: Օրինակներ: Ձեն բացակայի՛ր դժբախտաբար, ոմանք թերեւս տաղաչափական պահանջներու տոբ պոմին տակ — «Հիւր չպահես ոչ միմն» (էջ 10) . «գրկեց իրեն ու թոցուց» (17), «ընդունէ ինձ, ներէ ինձ» (59), «եւ քաղիք որ անձնասպան իյնայ թոխջրս հպարտ», եւն: Շփոթութեան տեղի տուած են երբեմն՝ բայերու ներկային ժրխտականները նաեւ: Պիտիկ, գրեթէ անշան աւրտներ՝ ասոնք՝ լեզուի մը համար որ, անխխտանութեան ու պարսաւելի կամայականութեան սա օրերուն, կ'ապացուցանէ գիտակից ու նուրբ օրինապահութիւն մը, շահելով անկէ:

«Տուներու Երգը» կը բերէ մեր գրականութեան՝ զգալութիւնները սերունդի մը, որ տարապալման իր ճակատադէրով կ'ապրի մեր

պատմութեան ամենէն ծանրակշիռ շրջանը: Այս գիրքը կը վստահի իր գոյութիւնը՝ վառելական ու դտարին բանաստեղծի մը տաք բախուն, գերակշռօրէն քնարական շունչին եւ դիմացկո՛ւն այն արուեստին որ իր տարրերը կ'առնէ անցեալին պանծարանէն, բայց կը յաջողի ճարտարապետել իր ոճը: Բանաստեղծութիւնը այստեղ յուզո՛ւմ է եւ միտք, կարօ՛տ ու տենչանք, արցո՛ւնք նաեւ, որ կը կախուի տըրտում տղու մը կիսախուռի թարթիչներէն, բայց չ'իյնար գետին: Կիսաբաց ծաղիկի մը չըթունւի՛ն՝ սարսուռն այն ցո՛ղն է, որ ունի իր ե՛րգը, եղերական պատմութիւնը՝ անպարագելի իր տիեզերքին: Գիրքը վաւերագիր մըն է նաեւ: Հոն է Հոգի՛ն բանաստեղծին, «որ երգեց Տուներու Երգն ու երկար տառապեցաւ տարապիր...»:

ՎԱՀԷՎԱՀԵԱՆ

Յ. Գ. Կը գրուէին վերջին էջերն այս յոգուածին, երբ հասաւ հեղինակին երկրորդ հատորը՝ «Կի՛ՐԱԿ», նոյնպէս հաւաքածոյ մը քրեթուածներու, որոնք տխուր սիրոյ մը պատմութիւնն ունին իրենա առանցք: Գերակշռօրէն անհատական իրենց նկարագիրով, անոնք կը յայտնարերեն նոր երեսներ հեղինակին զգայնութենէն: Այլապէս ուշագրաւ, այս հատորը կը ներկայանայ ժամանակակից մեր բանաստեղծութեան շահեկան վառարկներէն մէկը:

Վ.